ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

«ՀՈՎՏԱՇԵՆԻ Վ. ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

N 15

էլ. հասցե՝ hovtashen@schools.am

06.09.2023 թ.

Հեռ. 094-75-11-83

ՀՀ ԿԳՄՄՆ
գլխավոր քարտուղար
տիկին Հ. Տ. Հակոբյանին

Հարգարժան տիկին Հակոբյան

Ներկայացնում եմ Ձեզ հայտարարություն <<Հովտաշենի Վ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում, ուսուցչի թափուր տեղի մասին:
Առդիր 1 էջ:

Հաստատության տնօրեն՝ Տ. Զաքարյան

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Հովտաշենի Վ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Հասարակագիտություն>> առարկայից (9 դասաժամ), <<Երաժշտություն>> առարկայից (2 դասաժամ), <<Կերպարվեստ>> առարկայից (8 դասաժամ), <<Տեխնոլոգիա>> առարկայից (5 դասաժամ), <<Անգլերեն>> առարկայից (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **սեպտեմբերի 19-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10^{00}-ից 15^{00}-ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի :

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 22-ին՝ ժամը 14^{00}-ին,** Արարատի մարզի Հովտաշենի Վ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Արարատի մարզ, գյուղ Հովտաշեն, Բարեկամության 23:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 75-11-83: